

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 1

28.09.2021թ.

1. Համալսարանի ստորաբաժանումներում 2021-2022 ուս. տարվա ուսման վարձավճարների փոխհատուցման փոխատեղման (ռոտացիայի) վերաբերյալ.

1.1. ՀԱԱՀ ռեկտորատը բաց քվեարկությամբ միաձայն հաստատեց. ռեկտորատի նիստի ընթացքում ներկայացված 2021-2022 ուս. տարվա ուսման վարձավճարների փոխհատուցման փոխատեղման (ռոտացիայի) արդյունքները (հրամանները կցվում են):

1.2. ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց՝ «041801.00.6 Ագրոբիզնես» մասնագիտության «041801.01.6 Ագրոբիզնես» կրթական ծրագրից Ագրոբիզնեսի դեպարտամենտի կողմից անգլերենով իրականացվող «041801.00.6 Ագրոբիզնես» մասնագիտության «041801.04.06 Ագրոբիզնես և սննդի արդյունաբերության կառավարում» կրթական ծրագիր տեղափոխման հայտ ներկայացրած և շրջափոխման արդյունքում անվճար համակարգ անցած ուսանողներին թույլատրել ուսումը 3-րդ կուրսում իրականացնել անվճար հիմունքներով, ինչպես նաև երաշխավորեց այդ որոշումն ամրագրել շրջափոխման կարգում:

2. Համալսարանի ստորաբաժանումներում 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի սեպտեմբեր ամսվա ընթացքում ուսանողների հաճախումների վերաբերյալ.

2.1. Ընդունելի գիտություն:

2.2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին.

- ծանուցել դասընթացներին չհաճախող ուսանողներին և զգուշացնել չհաճախելու դեպում համալսարանից հեռացման վերաբերյալ,

- կանոնավոր կերպով իրականացնել ուսանողների հաճախումների տվյալների վերլուծություն՝ խնդրահարույց ուսանողներին ժամանակին բացահայտելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար,

- կանոնավոր կերպով իրազեկել ուսանողներին՝ բացակայությունների արդյունքում ձևավորվող կրեդիտային պարտքերի, ֆինանսական ծանրաբեռնվածության, 12 կրեդիտից ավելի առարկայական պարտքերի դեպքում համալսարանից հեռացման վերաբերյալ:

3. ՀԱԱՀ էթիկայի հանձնաժողովի կազմի հաստատման հարցի վերաբերյալ.

3.1. ՀԱԱՀ ռեկտորատը բաց քվեարկությամբ միաձայն հաստատեց էթիկայի հանձնաժողովի կազմը.

1. Մնացականյան Լուսինե Ոսկանի՝ ՀԱԱՀ աշխատակազմի ղեկավար

2. Գալստյան Իրինա Մնացականի՝ ՀԱԱՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ

3. Վարդանյան Մանվել Համայակի՝ ՀԱԱՀ իրավաբանական բաժնի պետ

4. Աղասարյան Արմեն Արտյուշայի՝ ՀԱԱՀ ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ

5. Զաքարյան Լիլիթ Սաշայի՝ ՀԱԱՀ որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն

6. Սուքիասյան Համո Կարենի՝ ՀԱԱՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ

7. Ալիյան Թոռնիկ Քարամի՝ ՀԱԱՀ ուսանողական խորհրդի նախագահ

3.2. Հանձնարարել աշխատակազմի ղեկավար Լ. Մնացականյանին՝ սեղմ ժամկետում կազմակերպել էթիկայի հանձնաժողովի առաջին նիստը:

4. ՀԱԱՀ ռեկտորատի 2021-2022 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը բաց քվեարկությամբ միաձայն հաստատեց ռեկտորատի 2021-2022 ուս. տարվա աշխատանքային պլանը:

5. Մասնագիտական կրթական ծրագրերի կազմման վերաբերյալ.

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին.

- Սեղմ ժամկետում ձևավորել ՄԿԾ-րի թիմեր, որոնք, օգտագործելով ՈԳԱ կենտրոնի կողմից մշակված ուղեցույցը կկազմեն ՄԿԾ-ներ նոր ձևաչափով:

- ՄԿԾ-րի թիմերում ընդգրկված աշխատակիցների հետ իրականացնել բացատրական աշխատանքներ:

6. Ռեսուրսական հակիրճ պլանների կազմման հանձնարարականի վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

7. Հեռակա ուսուցման դեպարտամենտի՝ 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից կամ մարտական հերթապահություն իրականացրած ուսանողների ուսման վարձավճարի գեղչ սահմանելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց.

7.1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի 2020-2021 ուս. տարվա վճարովի ուսուցման համակարգի 2016թ. քառօրյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած ուսանողների համար սահմանել գեղչ տարեկան ուսման վարձի 30%-ի չափով (հրամանը կցվում է):

7.2. Հեռակա ուսուցման դեպարտամենտի 2020-2021 ուս. տարվա վճարովի ուսուցման համակարգի 2016թ. քառօրյա պատերազմի ժամանակ մարտական

գործողությունների մասնակցած ուսանողների համար սահմանել զեղչ տարեկան ուսման վարձի 50%-ի չափով (հրամանը կցվում է):

8. Բանակից 2021թ-ին զորացրված ՀՈՒԴ ուսանողների առարկայական, կրեդիտային պարտքերի և լրացումների անհատական գրաֆիկով (ներքին պայմանավորվածության համաձայն) կազմակերպման ընթացքում ընդհանուր քիմիայի ամբիոնում ծագած խնդիրների վերաբերյալ.

Հանձնարարել էթիկայի հանձնաժողովին՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Լ. Մնացականյանի, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Մինասյանին, ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին, պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ղեկանի պարտականությունները կատարող Ս. Դավեյանին, ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ Լ. Հարությունյանին և ՀՈՒԴ ուս. խորհրդի նախագահ Ա. Պետրոսյանին՝ քննարկել հարցը և կայացնել համապատասխան որոշում:

9. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի գինու տեխնոլոգիա մասնագիտության առաջին կուրս 2019թ-ին կցագրված Ավագ Մելքոնյանի ուսանողական իրավունքների վերականգնման և ակադեմիական արձակուրդ ձևակերպելու հարցի վերաբերյալ.

Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Մինասյանին, ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին, իրավաբանական բաժնի ղեկավար Մ. Վարդանյանին և պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ղեկանի պարտականությունները կատարող Ս. Դավեյանին՝ լրացուցիչ քննարկել ներկայացվող հարցը և կայացնել համապատասխան որոշում:

10. ՀՀ վարչապետի հանձնարարությամբ/առաջարկությամբ ներքին կարգապահական կանոններում փոփոխություն կատարելու հարցի վերաբերյալ:

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց երաշխավորել ՀՀ վարչապետի հանձնարարությամբ/առաջարկությամբ կազմակերպության ներքին կարգապահական կանոններում առաջարկվող փոփոխությունների ներառումը ՀԱԱՀ ներքին կարգապահական կանոններում և ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

11. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժության ֆակուլտետի «Անասնաբուժություն» մասնագիտության մագիստրանտ Վահան Հովհաննիսյանի համար ուսման վարձի զեղչ սահմանելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժության ֆակուլտետի «Անասնաբուժություն» մասնագիտության մագիստրանտ, անասնաբուժական սանիտարական փորձաքննության, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի ամբիոնի ասիստենտ Վ. Հովհաննիսյանի ուսման վարձը 50%-ով փոխհատուցել համալսարանի միջոցների հաշվին:

12. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ԱԷԿ առաջին կուրս ընդունված Վլադիմիր Խաչատուրի Խաչատրյանի ուսման վարձավճարը մուծելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու դիմումի վերաբերյալ.

Մերժել դիմումը:

13. Թեստային քննությունների կազմակերպման համար հսկիչների ինստիտուտ ձևավորելու հարցի վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

14. 2022թ գնումների հայտերի ներկայացման վերջնաժամկետի վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

15. 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսման վարձավճարների հավաքագրման խնդրի վերաբերյալ.

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին ուսանողների և նրանց ծնողների հետ իրականացնել հետևողական բացատրական աշխատանքներ՝ ուսման վարձավճարների հավաքագրման նպատակով:

16. 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակում առաջին կուրսի ուսանողներին Moodle հարթակում կցագրելու վերաբերյալ:

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին սեղմ ժամկետում SS կենտրոնին տրամադրել բոլոր ուսանողների տվյալները:

17. 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակում նախորդ ուս. տարվա կրեդիտային պարտքերի լրացման նպատակով դասընթացների կազմակերպման հարցի վերաբերյալ:

Ընդունել ի գիտություն:

18. 2021-2022 ուս. տարվա բակալավրիատի երրորդ կուրսերի ուսանողների աշխատանքային կիսամյակի կազմակերպման հարցի վերաբերյալ.

Հանձնարարել կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնի ղեկավար Լ. Վարդանյանին, դեկաններին՝ կազմակերպել հանդիպում գործատուների հետ:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ.Է. ՌԻՌՈՒՏՅԱՆ

Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ